ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 73 -Ն «30» Հոկտեմբերի 2022

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Իմ հայրենիքը» առարկայի 5-րդ դասարանի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

11/30/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2022 թվականի նոյեմբերի 30-ի N 73 Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ԱՌԱՐԿԱՅԻ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՐԱԳԻՐ

«ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ
5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Թեմա 1
Ես ապրում եմ լեռնային երկրում **Քարտեզն իմ գործիքն է՝ ժամանակի և տարածության մեջ**
Նպատակ
Ձևավորել **հայրենիք** հասկացությունը մեկնաբանելու, տարբեր քարտեզներ ճանաչելու և կիրառելու հմտություն, **հոգատար վերաբերմունք** սեփական ազգի ու հայրենիքի պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ:
Ուսումնասիրության հարցեր
Ո՞վ եմ ես ժամանակի և տարածության մեջ, ո՞րն է իմ հայրենիքը: Ի՞նչ է քարտեզը, քարտեզների ի՞նչ տեսակներ կան, որո՞նք են տարբեր քարտեզների առանձնահատկությունները, ինչպե՞ս կիրառել դրանք: Ինչպե՞ս է ձևավորվել տոհմածառը՝ յուրաքանչյուր ընտանիքի ու ազգի պատմությունը: Արդյո՞ք կարելի է միշտ վստահել քարտեզներին:

Հիմնական հասկացություն	**Ենթահասկացություն**
Անհատ և պետություն	«Ժամանակ, տեղ, տարածություն», «Հայրենիք»,

Վերջնարդյունք
1. Նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաաշխարհագրական միջավայրը: 2. Ներկայացնի հայրենիքի խորհրդանիշները: 3. Մեկնաբանի և կիրառի զանազան քարտեզներ: 4. Գնահատի իր համայնքի, ազգի պատմամշակութային ձեռքբերումները:
Թեմայի բովանդակություն
1. Ես իմ փոքր հայրենիքում. իմ համայնքը, մարզը և երկիրը: 2. Մեր հարևանները: 3. Քարտեզների տեսակները և տարբերությունը. Արդյոք կարևոր են քարտեզները պատմության մեջ: 4. Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ նահանգներ, մայրաքաղաքներ, բերդեր, ամրոցներ, եկեղեցիներ, լեռներ, լճեր: 5. Ձիևանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական:

Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Բնակավայրի քարտեզի ստեղծում	**Ժամանակի և տարածություն**

2. Տոհմածառի կազմում 3. Հայկական լեռնաշխարհի տարածքի՝ նահանգներ, մայրաքաղաքներ, բերդեր, ամրոցներ, եկեղեցիներ, լեռներ, լճերի վերաբերյալ ալբոմի կամ գրքի ստեղծում:	Սովորողներն ուսումնասիրում են տարբեր մարդկանց ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապվածությանը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:
Միջառարկայական կապերը թեմայում	
Մաթեմատիկա-մասշտաբ Բնագիտություն-աշխարհագրական օբյեկտների նկարագրություն Մայրենի-տեքստերի ընթերցում՝ «Հերոդոտոս, Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի, Քսենոփոն, Մարկո Պոլո և այլք»:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ 15, Հ16, Հ17, Հ 25, Հ 28, Հ 30, Հ 31, Հ44, Հ45	

Թեմա 2	
Հայերի (իմ) ծագումնաբանությունը. **Հայկական լեռնաշխարհի բնակիչների կյանքը, կենցաղն ու ավանդապատումները**	
Նպատակ	
Ձևավորել հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մշակույթը, կենցաղը, ավանդապատումները, ծեսերն ու տոները նկարագրելու և վերլուծելու կարողություն: Սերմանել հոգատար վերաբերմունք ու վարքագիծ ազգային հոգևոր և նյութական մշակույթների նկատմամբ:	
Ուսումնասիրության հարցեր	
Ի՞նչ է մշակույթը, որոնք են մշակույթի տեսակները: Ինչպե՞ս է մշակույթը կերտում մարդու, ազգի ինքնությունը: Արդյո՞ք մշակութային ավանդույթների պահպանումը կարևոր է հասարակության ինքնության զարգացման համար:	
Հիմնական հասկացություն	**Ենթահասկացություն**
Ինքնություն	«Զարգացում» «Մշակույթ»
Վերջնարդյունք	

1. Մեկնաբանի Հայկական լեռնաշխարհի բնակիչների ավանդական զբաղմունքը, առօրյա կյանքն ու կենցաղը, նյութական և հոգևոր մշակույթի բաղադրիչները (մշակույթը և կենցաղը, ազգային տարազը, խոհանոցը, կիրառական արվեստը), ավանդույթները, տոներն ու ծեսերը:
2. Վերլուծի հայ ժողովրդի ծագման մասին ավանդապատումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա:
3. Վերլուծի տեղանքի ու իրադարձությունների, պատմաաշխարհագրական տեղանունների հետ կապված ավանդապատումները:
4. Գնահատի ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ:
5. Ներկայացնի Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթին ու կենցաղին:

Թեմայի բովանդակություն

1. Մշակույթ և կենցաղ. ազգային տարազ, խոհանոց, կիրառական արվեստ:
2. Ավանդապատումներ. հայ ժողովրդի ծագում, տեղանք՝ աշխարհագրական և պատմական վայրեր:
3. Ավանդույթներ, ծեսեր, պետական և եկեղեցական տոներ:
4. Հաստանի ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթն ու կենցաղը, ավանդույթներն ու տոները:

Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Թղթապանակի ստեղծում կիրառական արվեստի վերաբերյալ 2. Սահիկաշարի ստեղծում 3. Հարցազրույց տատիկների, պապիկների հետ 4. Գրի առնի տեղական ավանդույթներ ու ավանդապատումներ 5. Շաբաթօրյակի կազմակերպում պատմամշակությանին և հոգևոր հուշարձաններում	**Անհատական և մշակութային արժեհամակարգ** Վերլուծի ավանդապատումները, դրանց ունեցած ազդեցութունը տեղանունների, մեր ազգի ինքության ձևավորման, հայի տեսակի ձևավորման վրա: Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտական ճաշակն ու ստեղծարարությունը:

Միջառարկայական կապերը թեմայում

Մայրենի-ազգային տոների ու ավանդույթների, կենցաղի նկարագրությունը
Արվեստ-տոների բեմադրում, ազգային երգ ու պար

Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ

Հ 15, Հ16, Հ17, Հ 25, Հ 28, Հ 30, Հ 31, Հ44, Հ45

Թեմա 3	
Հայոց քրիստոնեական արժեհամակարգը	
Նպատակ	
Ձևավորել քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքները ուսումնասիրելու, հոգևոր-ազգային կառույցի դերը հասարակության կյանքում կարևորելու հմտություն, հարգանք սեփական ավանդույթների նկատմամբ:	
Ուսումնասիրության հարցեր	
Ի՞նչ է քրիստոնեական արժեհամակարգը, ի՞նչ է խորհուրդը: Ինչպե՞ս է ընդունվեկ քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն: Արդյո՞ք կրոնական բազմազանությունն է տարբերակում ազգերին:	
Հիմնական հասկացություն	**Ենթահասկացություն**
Արժեք	«Հավատք», «Փոփոխություն»,
Վերջնարդյունք	
1. Ուսումնասիրի քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքները: 2. Նկարագրի պատմական և մշակութային գործիչներին ու նրանց գործունեությունը քրիստոնեության ընդունման և տարածման գործում: 3. Մեկնաբանի քրիստոնեական եկեղեցու խորհուրդները: 4. Նկարագրի Հայաստանում բնակվող այլ ժողովուրդների կրոնա-դավանաբանական համակարգերը: 5. Համեմատի նախաքրիստոնեական և քրիստոնեական արժեհամակարգերի ընդհանրություններն ու առանձնահատկությունները հայ հասարակության մեջ:	
Թեմայի բովանդակություն	
1. Քրիստոնեական արժեհամակարգ. աստվածաշնչյան առակներ, Նորկտակարանային պատմություններ: 2. Քրիստոնեական եկեղեցու խորհուրդները: 3. Քրիստոնեության ընդունումը. առաքյալները: 4. Հայոց եկեղեցու սրբերը: 5. Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Մեսրոպ Մաշտոց: 6. Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների կրոնա-մշակութային համակարգերը:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Աղբյուրների ուսումնասիրություն Դերային և համագործակցային խաղեր	**Ժամանակ և տարածություն** Գոյությունը լիարժեք ընկալելու

Իրավիճակների խաղարկում և քննարկում Բանավեճ	համար անհրաժեշտ է «մոտենալ» տարածությանը և ժամանակին/ տարբեր մարդկանց կենցաղ, նրանց պատմություններ, ճանապարհորդություններ, մարդ-կության պատմության շրջադար-ձային կետեր, հայտնագործութ-յուններ, գյուտեր, ինչպես նաև ան-հատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

Միջառարկայական կապերը թեմայում
Մայրենի-ստեղծագործությունների գրական արժեքի գնահատում **Արվեստ-** մանրանկարչության ուսումնասիրում, երգեր
Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ
Հ 15, Հ16, Հ17, Հ 25, Հ 28, Հ 30, Հ 31, Հ44, Հ45

Թեմա 4	
Իմ հայրենիքի էպոսը՝ «Սասնա ծռեր» և այլ ժողովուրդների էպիկական պատումները	
Նպատակ	
Ձևավորել «Սասնա ծռեր» էպոսի և այլ ժողովուրդների էպիկական պատումների օրինակով ազգերի մշակութային առանձնահատկությունները վեր հանելու հմտություն:	
Ուսումնասիրության հարցեր	
Ի՞նչ է էպոսը, ի՞նչ է ազատությունը, անկախությունը, հավասարությունը: Ինչպե՞ս է էպոսում ներկայացված հայ ժողովրդի մշակութային առանձնահատկությունները: Արդյոք ազատությունն ու անկախությունը կարևոր են պետություն ունենալու համար:	
Հիմնական հասկացություն	**Ենթահասկացություն**
Արժեք	«Մշակույթ», «Հարաբերություններ»,
Վերջնարդյունք	

1. Վերլուծի «Սասունցի Դավիթ» էպոսում ներկայացված արժեհամակարգը:
2. Համեմատի և հակադրի այլ ժողովուրդների էպոսներում ներկայացված արժեհամակրգը «Սասունցի Դավիթ» էպոսի հետ:
3. Տարբերակի էպոսի հերոսների գործունեությունը:
4. Մեկնաբանի Էպոսի հերոսների բնավորության գծերը և գնահատի նրանց ազդեցությունը իր վարքի դրսևորման վրա:
5. Հետազոտի և բացահայտի սեփական շրջապատում էպոսի <<մերօրյա>> հերոսներին:

Թեմայի բովանդակություն

1. «Սասունցի Դավիթ» էպոսը:
2. Հասարակությունն էպոսում:
3. Կերպարներն էպոսում:
4. Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:
5. Այլ ժողովուրդների էպոսները:

Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Հերոսների կերպարների ուսումնասիրում Աղբյուրի ուսումնասիրում Ձեկույց	**Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողներն ուսումնասիրում են էպոսի հերոսների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրություններն ու տարբերությունները: Էպոսի արժեհամակարգերի և իրենց արժեհամակարգերի համեմատություն են անում՝ տեսնելու թե՞ էպոսի որ հերոսների արժեհամակարգի կրողներն են:

Միջառարկայական կապերը թեմայում

Մայրենի -առասպել, էպոս
Բնագիտություն- կլիմայի կամ լանդշաֆտի փոփոխություն
Մաթեմատիկա-օրացույց՝ լուսնային, արևային, շաբաթների բաժանում և այլն

Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ

Հ 15, Հ16, Հ17, Հ 25, Հ 28, Հ 30, Հ 31, Հ44, Հ45

Թեմա 5

Անհատն ու հասարակությունը	
Նպատակ	
Ձևավորել անհատների դերը հասարակության ձևավորման գործում վերլուծելու, գնահատելու հմտություններ:	
Ուսումնասիրության հարցեր	
Ի՞նչ գործոններ են ազդում անհատի և հասարակության ձևավորման վրա: Ո՞րն է անհատի ունեցած ազդեցությունը հասարակության վրա: Արդյոք անհատի ազդեցությունը հասարակության վրա միայն դրական է:	
Հիմնական հասկացություն	**Ենթահասկացություն**
Համակեցություն	Փոփոխություն, Զարգացում
Վերջնարդյունք	
1. Ուսումնասիրի անհատի ունեցած ազդեցությունը հայ հասարակության վրա: 2. Վերլուծի անհատի ունեցած դերը հասարակության զարգացման տարբեր բնագավառներում: 3. Գնահատի անհատի ունեցած դերը հասարակության կյանքում՝ ձևավորելով հարգալից վերաբերմունք նորարարություն արժեհամակարգի վերաբերյալ:	
Թեմայի բովանդակություն	
1. Ո՞վ է անհատը. քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային գործիչ: 2. Ինչպես է ձևավոևվում հասարակությունը: 3. Անհատի դերը հասարակության կայացման գործում:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Պաստառ Հարցում Թղթապանակ	**Անհատական և մշակութային արժեհամակարգ** Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությունը և ստեղծարարությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Մայրենի-ստեղծագործությունների գրական արժեքի գնահատում **Մաթեմատիկա**-հաշվարկներ, խնդիրների ստեղծում	

Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ
Հ 15, Հ16, Հ17, Հ 25, Հ 28, Հ 30, Հ 31, Հ44, Հ45